



## 30. ԾՈՒՌՈ ՆՈՔՅԱՐԸ

Հըլնըմ ա, չի հըլնըմ մե աղքատ, եսիր կնիկ: Էս կնիկն ունենըմ ա էրկու տղա: Մենձը շատ խեղճ ու նաչար ա հըլնըմ, իսկ պստիկը՝ շատ կոչաղ:

Օրերից մե օր մերը մենած տղին ասըմ ա.—Բալա' ջան, քո պստի ախաղերը հիրա գլուխը պահըմ-արրըմ ա, արի դու էլ քո գլսի ճա՛րը տե, գնա մի տեղ նոքյար էլ, աշխատի՛, աբրի՛:

Տղեն հնազանդ տղա էր, ասըմ ա.—Լա'վ, ա'յ մեր:

Հեքսի օրը մերը մե էրկու բոքոն ա թխըմ, տալըմ տղին, տղեն բոքոններն առնըմ տալըմ ա կոլթղի տակն ու էթըմ: Շատ ա էթըմ, քիչ ա էթըմ, հասնըմ ա մե գեղ տեղ:

Էլ գեղի քուչով հընցնելու վախտը, տենըմ ա մե հատ Դավոյենց դարվագի նման դարվագ ա բաց ա, ոտը կախ ա քցըմ, տենըմ ա, հեսա մե աղա մարթ, սապոքներն հաքին, բեյնին պապիլոսը, բալկոնին կայնած ա:

Աղեն, որ տղին տենըմ, հարցընըմ ա.—Հը, տղա', ի՞նչ ես ուզըմ:

—Ինչ պտի ուզեմ, աղա' ջան, քյասիր, աղքատ տղա եմ, ուզըմ եմ լավ մարթի կուշտ ընթունվեմ, նոքյար աշխատեմ:

Աղեն ասըմ ա.—Տղա' ջան, էս ինչ լավ վախտին էկար, մեր նորյարի ժամանակը թմմեր ա, նոր նորյար պտի բռնեմ:

—Դե հեսա ես իմ ոտով էկեր եմ, էլի, աղա' ջան:

Աղեն ասըմ ա.—Լա'վ, արի աշխատի՛:

—Աղա' ջան, իմ աշխատանքն ի՞նչ պտի հըլնի:

Աղեն ասըմ ա.—Ա'յ բալա, մենք ոչպար գյուղացի մարթ ենք, վարուցանք ա' ինչ պտի հըլնի: Զորսը հատ եզ ունեմ, մե դանա, մե կով, մե դափա, մե ձի, մեկ էլ մե էշ, էդ անասուններին կըպահես, մեկ էլ վարուցանք կանես:

Տղեն ասըմ ա' լա'վ, ուազի եմ:

Աղեն ասըմ ա.—Դե որ ուազի ես, ասա' տենամ, ի՞նչ ես ուզըմ:

Տղեն ասըմ ա.—Աղա' ջան, հարիր մանեթ փող կըտաս:

—Ա'յ տղա, շատ ա:

—Զէ՛, աղա՛ ջան, շատ չի: Հարիր մանեթն ի՞նչ ա որ:

Աղեն ասըմ ա.—Լա՛վ, հարիր մանեթ փող կըտամ, հըմա քեզ  
Հետ մի պայման կըկապեմ:

Ասըմ ա.—Ի՞նչ պայման:

Աղեն ասըմ ա.—Եթե դու քո աշխատանքը լրիվ կատարես, հա՛մ  
քեզ հարիր մանեթ փող կըտամ, հա՛մ էլ կըթողեմ, որ իմ մշկից մե  
զող կաշի հանես, թե որ չըկատարիր, հա՛մ քո հախը չեմ տա, հա՛մ  
էլ ես քո մշկից մե զող կաշի կըհանեմ, ուզի ե՞ս:

Տղեն մտածըմ, մտածըմ, ասըմ ա. «Ի՞նչ ա, որ ուզի չըհընեմ.  
վարուցանք ա, կանեմ, կու յա, կըթափեմ, տափար ա, կըպահեմ»:

—Աղա՛ ջան, ուզի եմ:

—Դե որ ուզի ես, ա՛ռ, ձեռքդ դի՛ էս թղթի տակը:

Տղեն վերցըմ, թղթի տակը ստորագրըմ ա, բերըմ տղին մե թի-  
քա հաց ու ջուր են տալըմ:

Աղեն ասըմ ա.—Դե, տղա՛ ջան, էս քշեր եզներին լավ կըկտաց-  
նես, եփ որ ձեն կըտամ, կըհընես, եզները կըլծես, կէթաս վար:

Տղեն էթըմ ա գոմօթաղը, քընըմ, քշերվա մե վախտ աղեն ձեն  
ա տալըմ՝ նոքյա՛ր, նոքյա՛ր:

Տղեն զարթընըմ՝ համմե՛, աղա՛ ջան, համմե՛:

Աղեն հոսոտըմ, ասըմ ա.—Նոքյա՛ր, ճաշքուն ես տալը՞մ, ե՛լ, է:

Նոքյարը պաճուճակը քորելով հընըմ, չարխներն հաքնըմ,  
ասըմ ա.—Ասա՛, աղա՛ ջան:

—Նոքյա՛ր, քանի անքամ ասեմ՝ ե՛լ, եզները լծի՛, գնա՛ վար:

—Աղա՛ ջան, ո՞ր եզները:

—Գոմի վերակի կապած եզները՝ կազախն ու Կարագյողը:

Տղեն ալբալը հելավ, եզները բերեց, լուծը դրեց վզներին, լծեց:

Աղեն ասավ.—էրկու թայ էլ ցորե՛ն վերցա:

Ցորենն էլ վերցեց, ասավ.—Աղա՛ ջան, ո՞ր յանը քշեմ:

Աղեն՝ թե.—էս իմ զաղար թուլեն տենըմ ես, հետղ կըտանես,  
որդե որ թուլեն կըպազի-կըհընի, էնի մեր արտն ա, կըվարես, կը-  
ցանես:

Նոքյարն ասավ՝ լա՛վ:

Թուլին քցեց հառեշը, եզներն էլ հեղեկից, քշեց գնաց:

Իշքան խամ-խոզան կար, հընցան, թուլեն հելավ, մե բանցը  
բաշի գլխի կայնավ, էրկու անքամ պազավ-հելավ:

Տղեն ասավ.—Վայ, քո տունը չըքանդվի, էս բաշի զլոխը ես  
ոնց վարեմ:

Վերը վեսկին քցեց քարը-քոլի մեչ, դես ջղղեց, դեն ջղղեց, եզ-  
ներն էլ՝ հա-հայա պտի բաշի գլխից տփվին ցած, տղեն կայնավ,

կայնավ, ասավ. «Զա՞նըմ, էս հացը հարամ ա, ըստե ո՞նչ կըվարվի, ո՞նչ կըցանվի»:

Ասեց ու եղների գլուխը թեքեց դբա տուն:

Հիրիկունն աղեն գեղի մջից էկավ, ասավ.—Հը՝, տղա՛, գործերդ ո՞նց ա, լավ վարի՞ր, լավ ցանի՞ր:

Տղեն՝ թե. —Աղա՛, քո հա՛խն էլ քեզի, քո հա՛ցն էլ, ես թողնըմ եմ էթամ:

Աղեն ասավ.—Ո՞նց թե՝ թողեմ եմ էթամ, բա պայմանը...

Նորյարն ասավ.—Ի՞նչ պայման, աղա, ես էլ չեմ մնըմ քո կուշ-տը:

Աղեն ասավ.—Զէ, նորյա՛ր, մենք պայման ունենք:

Վերը աղեն խեղճ, քյասիր եթմին կղըցրեց, մշկից մե զոլ կաշի քըրթեց, ասավ՝ դե հիմի զնա՛:

Տղեն հելավ լալով, մղկտալով էկավ հընգավ հիրանց տունը:

Մերը գացեր էր հարվանին լվացք էր անըմ, էկավ տուն, տե-հավ ինչ. տղեն բերնի վրա տփկեր ա գետին, գոռըմ ա:

—Այ տղա, էդ ի՞նչ ա հելե:

—Ա՛յ մեր, ճար ունես՝ բե՛, մեռնըմ եմ:

Մերը տղի մեշկը բացեց, յարեն որ տեհավ, գլխին տվեց, գոռում-գոչումը քցեց:

Հիրիկունը պստի ախապերն էկավ տուն, ասավ.—Ա՛յ մեր, էդ ի՞նչ ա պատահե:

Մերն ասավ.—Էլ ինչ պտի պատահի, տուններս քանդվեր ա:

Տղեն ախապոր մեշկը բացեց, տեհավ, որ ախապոր մշկից մե զոլ կաշի ա քերթաձ, սրտից արուն զնաց:

Հառավոտ էն բաշտեն պստի ախապերն հելավ, չոմախի գլոխը մե քանի մեխ զանեց, մե կլոճ դրեց թևի տակ, ասավ.—Ա՛յ մեր, ես գացի:

—Այ տղա, հո՞ւր ես էթըմ:

—Էթըմ եմ իմ ախապոր հարիփը հանեմ:

Տղեն գնաց նույն գեղը, ախապոր սալըխ տված տունը քթավ, վի-զը ծոած կայնավ դարվազի դռանը, տեհավ՝ հեսա մե աղա մարժ, պապիլոսը բեյնին, բալկոնում ման ա գալըմ:

Տղեն վիզը հերզնցրեց, աղեն տեհավ.—Հը՝, տղա՛, ի՞նչ ես ու-զըմ, վո՞վ ես:

Տղեն ասավ.—Աղա՛ ջան, եթիմ, քյասիր տղա եմ, էկեր եմ աշխատանք ճարեմ:

Աղեն ասավ.—Նե՛րս արի, նե՛րս արի:

Տղեն գնաց ներս:

—Հը, ասա՛ տենսամ, ի՞նչ աշխատանք կանաս անի:

—Աղա՛ ջան, քյասիր, աղքատ տղա եմ, ուզըմ եմ նոքյար հըլնեմ  
քեզի, նոքյար:

Աղեն ասավ.—Հա՛, տղա՛ ջան, իմ նոքյարի ժամանակը թըմմեր  
ա, լավ վախտին էլ էկեր ես, ընձի մե հատ նոքյար ա պետք:

Տղեն ասավ.—Դե հեսա ես եմ, որ կամ, էլի՞:

Աղեն ասավ.—Լավ տղա ես էրերմ, ի՞նչ տամ, որ մե տարի իմ  
կուշտը աշխատես:

Տղեն ասավ.—Էրկու հարիր մանեթ:

Աղեն ասավ.—Թանգ ա:

Տղեն ասավ.—Էդ ա, կըտաս՝ տու, չես տա՝ դու գիղես:

Աղեն ասավ.—Լա՛վ, կըտամ, հըմա մե պայմանով:

Տղեն ասավ.—Ի՞նչ պայման:

Ասավ.—Տղա՛, ես քեզի աշխատանք կըտամ: Աշխատանքը որ  
պրծնես, էրկու հարիր մանեթ փող կըտամ, համ էլ կըթողեմ, որ իմ  
մշկից էլ մե զոլ կաշի հանես: Թե չըկատարիր, համ քո փողը չեմ  
տա, համ էլ էս անգամ ես քո մշկից մե զոլ կաշի կըհանեմ, ուազի  
ե՞ս:

Տղեն ասավ.—Հա՛, աղա՛ ջան, լավ պայման ա, ուազի եմ:

—Դե,—ասավ,—գնա եզներին մե լավ կշտացրա՛, որ հառավո-  
տը էն բաշտեն էթաս վար:

Տղեն գնաց գոմօթախը, քնավ: Մե էրկու սհաթ հըլը չէր քնե,  
հելավ վեր, եզներին խոտ ու դարման տվեց, չարխներն հաքավ,  
գնաց աղին ձեն տվեց՝ աղա՛, աղա՛:

Աղեն հելավ վեր:

—Աղա՛ ջան, ընձի ճամփո՛ւ քից, ետ ա:

Աղեն էրկու մեշոք ցորեն տվեց:

Տղեն եզները լծեց, վեսկին ու էրկու թայ ցորենը կապեց,  
ասավ.—Հը, աղա՛, դո՞ւ ես զալըմ հետրս, թե խանըմը:

Աղեն ասավ.—Ո՞նչ ես, ո՞նչ խանըմը:

Գնաց զաղար թուլին հարձկեց, ասավ.—Տղա՛, էս թուլին հետղ  
տա՛ր, թուլեն որդե կայնի, էրկու անքամ պազի-հըլնի, էնի մեր  
արտն ա, կըվարես, կըցանես:

Նոքյարն ասավ՝ աշկիս վրեն:

Թուլեն հընգավ վեսկու հառեչը, տղեն՝ հետևից, քչին գացին:  
Զաղար թուլեն գնաց հելավ էլի էն նույն բաշի գլոխը, էրկու ան-  
քամ պազավ-հելավ, պազավ-հելավ, տղեն ասավ. «Տո ես ըստա  
տիրու հերն եմ անիծե, վով գիղի, քանի մարթի ա վայիս հելե»,  
ասավ, մշկից սապոնքը հարձկեց, մե պոպոքի չափ քար դրեց մեջը,  
նշան բոնեց, տալու բաշտան՝ զաղար թուլա, հէսօր ես սատկե, թե  
հերեկ, ջանդակը կապեց լծից, քչեց բերեց տուն:

Աղեն գեղի մշից էկավ տուն, տեհավ զաղար թուլեն սատկցրած,  
Հայաթը քցած, տղեն էլ փետը ձեռին ընդե կայնած:

Իշկաց, իշկաց, բան չասավ, թողեց գնաց տուն:

Տղեն գնաց, տեհավ՝ աղեն խանըմի Հետ խոսըմ ա, անգաջ  
արավ, որ աղեն հիրա մասին ա խոսըմ:

—Այ կնիկ, էս շան տղեն զուլում տղա էրկըմ, իմ մահը ըստա  
ձեռին ա:

Տղեն որ էս խոսքերը լսավ, ավելի սրտանդվավ, արխային  
գնաց, քնավ:

Հառավոտ աղեն հելավ, կանչեց նոքյարին ասավ.—Ես էթըմ  
եմ գեղի մեջ, գործ ունեմ, հէսօր եղներին լավ քո ուզածի պեստ  
կըկերցնես, էնքան խոտ ու դարման կըտաս, որ գլոխները թաղեն  
մեջը, թե չէ՝ որ էկամ, վիզո կըկդրեմ:

Նոքյարն ասավ.—Աշկիս վրեն:

Աղեն հըլը դոնից դուս չէր էկե, տղեն հելավ, իշքան խոտ ու  
դարման կար, բերեց լցեց եղների հառեչը, եղները կերան-կշտա-  
ցան, քաշվան ետ:

Տղեն ասավ.—Էս չելավ, գլոխները չըթաղվավ մեջը:

Դանակը քաշեց, հընզավ եղների մեջը, չորսի վիզն էլ կդրեց,  
գլոխները բերեց թաղեց մսրքի խոտ ու դարմանի մեջ:

Հիրիկունն աղեն էկավ տուն, ասավ.—Հը՞, տղա՛, եղներին լավ  
կեր տվեր ե՞ս:

Տղեն ասավ.—Հա՛, աղա՛ ջան, քո ասածի պեստ կուշտ կերեր  
են, գլոխներն էլ թաղեր են մսրքի խոտ ու դարմանի մեջ:

Աղեն գնաց գոմը, տեհավ, որ հեսա հիրա չորս եղն էլ մորթած,  
ջանդակները քցած գետին, գլոխները թաղած խոտ ու դարմանի  
մեջ: Աղեն էլի ոչինչ չասավ, գլոխը կախ, սուսուփուս գնաց տուն:

Տղեն ասավ. «Էթամ տենամ՝ էս անգամ ի՞նչ են խոսըմ»:

Գնաց անգաջ արավ, տեհավ, որ էլի աղեն կնզան գանգատվըմ  
ա. —Այ կնիկ, իմ մահը էս շան տղի ձեռին ա:

Հեքսի օրը աղեն հերսոտ-հերսոտ նոքյարին ասավ.—Ե՛լ, գնա՛,  
դավեն, դանեն, էշը տար արածըցրա՛:

Տղեն ասավ.—Աղա՛ ջան, էլ ընչե՞ս նեղանըմ:

Աղեն ձեն-ծապտուն չըհանեց: Տղեն գնաց գոմի դուռը բացեց,  
էշին, դանին հանեց դուս, դավին էլ խառնեց հետները, քշեց: Տա-  
րավ մե կանանչ ու դուրան տեղ, բաց թողեց, պառկավ քնավ:  
Քունն առավ, հելավ, տեհավ, որ էշն ու դանեն մե յան են դացե,  
դավեն՝ մե յան: Գնաց հավաքեց հիրար գլխի: Սոված էր, ասավ.  
«Էթամ տուն, մեքյա հաց ուտեմ դամ»:

Ուզրմ էր էթար, մտածեց, ասավ. «Վայ թե անտերներն էթան կորեն»։ Էլ հերգար-բարակ չըմտածեց, ճաշի շոք վախտն էր, էշն ու դանեն նստած ին դավի շվաքին, բերեց էշին ու դանին կապեց դավի զգին, որ չըփախնեն, հինքը գնաց տուն։

Տղեն հըլը ոտը չէր քաշե, դավեն վիզը կուզ ու պարզ արավ, հելավ կայնավ. որ հելավ կայնավ, էշն ու դանեն կախ հընգան դավի վզից, խեխտվան։

Տղեն դարցավ էկավ, տեհավ, որ հեսա էշն ու դանեն դավի վզից պխկի նման կախվեր են։

Դավին տվեց դորի տակ, քշեց դրա տուն։ Խեղճ դավեն մինչև էշի ու դանի մեջիդը բերեց տուն, վիզը վրից պրծավ։ Դարգայից ներս մտնելու վախտը տղեն, որ տեհավ՝ դավեն խոտնըմ ա, փետը քաշեց, առա՛ դավի զլիխն տալու բաշտան դավեն էլ փովավ զետին։

Աղեն էկավ, ի՞նչ տեհավ, որ հեսա՝ էշը սատկած, դանեն սատկած, դավեն սատկած, էլ ոչ մե բան չասեց, սուս-փուս գնաց տուն։

Տղեն սովոր էր, էլի գնաց անգաջ արավ։

Աղեն էլի նույն բառն ասավ. —Ա՛յ կնիկ, իմ օլումը էս շան տղի ձեռին ա։

Տղեն բանի տեղ չըդրեց, գնաց գոմօթաղը հիրան համար քնավ։

Հառավոտը աղեն հելավ նորյարին ձեն տվեց՝ նորյա՛ր, նորյա՛ր։

Նորյարն էկավ, ասավ. —Համե՛, աղա՛ ջան, ի՞նչ կա։

Աղեն ասավ. —Նորյա՛ր, հէսօր ես ու կնիկս էթըմ ենք հարսանիք, տեղ չես էթա, կընստես դռան կուշտը, մուղաթ կանես, մինչև մեր դալը։

Նորյարին ըսկի հաց էլ չըտվին, դուռը փակին դացին։

Տղեն նստավ դռան առաջ մե սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, չորս սհաթ... համմիերությունը կրրավ, հելավ դուռը ճխահան արավ, ջաթուն քցեց, շկեց տարավ հարսընքտուն։ Տեհավ՝ աղեն նստեր ա սաղից դիվեր, տարավ դուռը զեց աղի հառեցը։

—Ա՛ռ, —ասավ, —անտեր մնա քո դուռը, ես իշքան պտի սոված-ծարավ նստեմ, որ դուք գաք ընձի հաց տաք։

Աղեն թեքվավ նորյարի անգջին ասավ. —Նորյա՛ր ջան, մունաթ եմ անըմ, դուռը վերցա՛, հե՛տ տար։

Նորյարն ասավ. —Զէ՛, ես բերեր եմ, դու էլ տա՛ր։

Աղի ճարն ինչ։

Ասավ. —Կնի՛կ, ե՛լ։

Կնիկն հելավ, մարթ ու կնիկ դուռը շկին էկան տուն։ Նորյարը գոմօթաղին էր, որ տեհավ՝ աղեն ու խանըմը գալըմ են, ասավ. «Էթամ տենամ՝ հըլը ի՞նչ են խոսըմ»։

Նորյարն անգաղ արավ, աղեն էլի նույն բանն ասեց:

Տղեն արխային էկավ, որ քնի, աղեն կանչեց, ասավ.—Նորյա՛ր,  
ես հմացեր եմ, որ էս քշեր գողերը պտի գան, իմ ձին ու կովը  
գողանան, քշերը օյաղ կըքնես, որ գողերի գալու վախտը ընձի հի-  
մաց անես:

Նորյարն ասավ.—Աշկի՛ս վրա, աղա՛ ջան:

Տղեն էկավ գոմօթաղը քնավ, քշերվան մե վախտ զարթնավ,  
տեհավ, որ լուսնակի լուսը հերթկից հընգեր ա ձիան գլխին, ասավ՝  
ըհը, ըստանք գողերը կըհընին: Հելավ չոմախը վերցեց, առա՛ հա,  
գանելու քիմին, խեղճ ձինը փովավ գետին:

Հելավ ձեն տվեց, ասավ.—Աղա՛, աղա՛, արի՛, գողերին բռներ  
եմ:

Աղեն բահն առավ վազավ, հարցրեց՝ Հո՞ւր են:

Տղեն ասավ.—Հեսա, մե ջոջագլուխը էլ էս քնջին ա:

Աղեն բահն քաշեց դուզ քնջին կապած կովի գլխին, տալու բաշ-  
տան կովին էլ ընդե սատկցրավ:

Աղեն փորը-փոշման էկավ տուն:

Կնիկն ասեց.—Հը, հիմի ի՞նչ ա պատահե:

Աղեն ասավ.—Ա՛յ կնիկ, էլ ի՞նչ պտի պատահի, տուններս  
քանդվավ, գոմին իշքան անսառոն ունինք, նորյարը վերջը տվեր  
ա: Բեր ինչ ունենք-չունենք, հավաքենք, թողենք ըստեղից էթանք:

Կնիկն ասավ.—Ա՛յ մարթ, էսքան աբրանքն Հո՞ւր տանենք:

Մարթն ասավ.—Դե լա՛վ, ա՛յ կնիկ, ալուրն ու եղը բե ճամփի  
համա գաթա թխի՛, հընենք էթանք:

Կնիկը բերեց գաթեն թխեց:

Մարթն ասավ.—Ա՛յ կնիկ, զնա մարաքից մեր գարմընի սակա-  
ռը բե՛, որ գաթեն լցենք մեջը տանենք:

Տղեն թաքուն լսել էր աղի ասածը: Կնիկն հելավ գնաց մարաքը,  
սակառը անջաղ գետնից կդրեց, ճկրտալով բերեց:

Մարթն ասավ.—Դե, կնիկ, չո՞ւտ արա, գաթեքը լի՛ց մեչը:

Դու մի ասա, նորյարը գոխտուկ մտեր էր սակառի մեչը: Մարթ  
ու կնիկ գաթեքը լցին նորյարի գլխին, սակառը շկին, հընգան ճամ-  
փա:

Մարթը ճամփին մե քանի անքամ ասավ.—Ա՛յ կնիկ, բեր էս  
գաթի կեսը թափենք, բեռներս ծանդը ա:

Կնիկն ասավ.—Էղքան չարչարվել եմ, թխեր եմ, բա ափսոս չի՞:

Սաղ քշերը չեմ քնե, գաթա եմ թխե, որ դու թափես:

Մարթը շատ ասավ, կնիկը քիչ լսեց, սակառը փոխեփոխ շկե-  
լով բերին հասցրին մե կանանչ դուրան տեղ:

Տեհան, որ հեսա մե չորան սուրույով ոխչար ա արածցընըմ:  
Ոնց հելավ, ես չորանի շները տեհան աղին, ամեքը մե յանից թռան,  
Էկան աղի սակառն առան մեջ ու զգիկ-զգիկ արին: Հա՛, Հայե՛ր,  
աղին էլ ին փուռթկըմ:

Աղեն ասավ.—Այ գիղի, ծո՛ւռ նոքյար, ըստե Հըլնիր, Հա՛:

Նոքյարը գաթեքի տակից գլոխը Հանեց, ասավ.—Աղա՛, ես ըս-  
տեղ եմ, ի՞նչ կա:

Աղեն, որ նոքյարին տեհավ, լեղին ջուր կդրավ:

Նոքյարն ասավ.—Դե ե՛լ, աղա՛, բոլ ա, իշքան դուք իմ Հոքին  
կերաք, էթանք տուն, իմ Հախ-Հաշիկը փակե՛ք, ճամփո՛ւ քցեք:

Էկան տուն, աղեն Հանեց էրկու Հարիր մանեթի տեղ Հինգը:  
Հարիր մանեթ փող տվեց, որ նոքյարն էլ պայմանի անուն չըտա:  
Կնիկն էլ մե յանից Հանեց մե Հատ Հարրանոց ճիտեց նոքյարի ջե-  
րը:

Նոքյարն ասավ.—Զէ՛, խա՞նըմ, ըտենց բան մի՛ արա, կընեղա-  
նամ:

Դարցավ, աղին ասավ.—Դե պրծի՛, աղա՛, շո՛ւտ արա, պազի՛:

Աղեն ասավ.—Այ նոքյար, բա էղքան փողերը...

Նոքյարն ասավ.—Աղա՛, բա պայմանը...

Վերջը աղին կղցրեց, դանակն Հանեց, աղիս մշկից լենը բոլ մե  
զոլ կաշի քրթեց, փողերն էլ Հաշվեց, դրեց ջերն ու էկավ տուն:

Էկավ, տեհավ, որ Հլը հիրա մենձ ախպերը տեղաշորով պառ-  
կած ա: Գնաց էղ փողով մե Հեքիմ բերեց, ախպոր յարեքը բուժեց,  
մնացած փողն էլ տվեց մե քանի տարվա աբրուստ առավ, կերան-  
խման, քեֆ արին... աղի կաշին էլ քցին շներին:

